ԱՄԵՌ
ՀՐԵՏԱՆԻ

891.99
Ա-48

196

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока.

28 JUN 2005

19 NOV 2010

89199
Ա-48

1001/679

ԱՄԵՌ

ՀՐԵՏԱՆԻ

ՊՕԷՄԱԿՈՉ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԻԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ «ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ»
ՄՕՍԿՎԱ 1924

08.02.2013

19083

ԱՐՏԱՏՊԻԱԾ Է «ՔՈՒՐԱ»-Ի Ց.
ՎԵՐԱՄՇԱԿԻԱԾ.

ԱՐՇԱԼՈՒՍԻՈՂ
ԱՐԵԻՄՈՒՏՔԻՆ

ՀՐԵՏԱՆԻ

ՀՐԵՏԱՆԻՆ որ կերտեցի՝
Ահա նա՛։

Ահե՛ղ ճնաս...

Խոկանքիս հետ,
Կռանիս տակ և սրտիս թէժ կրակով,
Կնճռոտեցի, եղծեցի
Խաղաղ ոգին մետաղի,
Եւ կոփեցի, կոփեցի —

Տէր ձևե՛ր Քեզ՝ խոժոռ,
Բացի երախդ՝
Զարհուրելի...

Անպա՜ռ մնաս...

Շնչափողիդ մէջ, ահա՛
Կը դնեմ սի՛րտս՝ վառօդ,
Աշխարհալուր պայթոցով։

Ա՛ռ. ռումբե՛ր Քեզ,—
Ունեցի՛ր
Տեմպս հսկա,
Եւ գայրոյթս՝ ծովաշառաչ միլիոնի.
Ա՛ռ. ռումբե՛ր Քեզ,
Նրանց մէջ՝
Միլիո՜ն, միլիոն աղաղակ
Միլիոն կռուփ,
Ամեն կռուփ՝ շոգեմուրճ,
Որոնց հուժկու զարկի տակ,
Պիտի ճեղքւի՛
Բաստիլիոն,
Ինչպէս կճեպն ընկոյզի...

Քե՜զ,
Հրեանի,—
Ես ձուլեցի՝
Եւ ուզեցի, որ ձուլեմ
Տիեզերքի վրա հևացող
Կատաղի ԶԱՆԳ...

Զնգա՛,
ԶՆԳԱ՛...

Լսի՛ թող,
Թող սթափւի՛
Ամեն ստրուկ,
Որի մտքին դարէ դար
Կա՛պ են դրել,
Եւ քայլերի վրա՝ փակա՛ն.

Ով հանքերում,
Խուլ ծալքերում երկրամէջ,
Կպրոտ, մրոտ, մերկատիտ,
Եւ մահւան հետ գրկախառ,
Արևից զուրկ,
Բայց Արեգա՛կն իր սրտում՝
Թակո՛ւմ, թակում,
Ճանկռում է սի՛րտը երկրի...

Զնգա՛,

Զնգա՛...

Դարձիր յորձանք հրեղէն,
Ծփա՛, ծծուիր
Բոլոր խորշե՛ր նրանց,
Զարկի՛ր նրանց սրտերին
Էլէքտրական զարկերով,—
Փշաքաղի,
Կանգնի՛ թող
Ամեն ստրուկ գետնաթաղ,
Թրծի հոգին իր՝
Պողպա՛տ։

Եւ թող պոռթկան,
Թող ժայթքե՛ն
Քո աչքերից լուսարձակներ ողողիչ,
Ծփա աշխարհ սահանքների մէջ լոյսի.
Լոյսդ թափիր ասեղների տարափով
Ամեն փողոց, փակուղի,
Ամեն նկուղ.
Ու հեռունե՛ր ամեն տեղ—
Լինի խրճիթ՝
Թէ կողով եղէգնագործ,
Որի տակ,
Երկու հոգի կը կիսեն
Մի կտոր հաց հողաբոյր...

Գոռա՛,

ԳՈՌԱ՛...

Եւ թող կանգնեն զինավառ,
Թող գա՛ն,
Ըմբո՛ստ՝
Մի մի գնացք զրահապատ.—

Բոլո՛ր նրանք,
Որ արևներ վառեցին,
Եւ ապրեցին խաւարում.

Բոլո՛ր նրանք,
Ովքեր ցորեն ցանեցին,
Սակայն բաժինը իրենց,
Երբ հնձեցին՝ մնաց ծղո՛տ...

Ովքեր
Ողկոյզ կթեցին,
Սակայն իրենք՝
Կերան լեղի և քացախ,
Եւ պատառ հա՛ցը հողոտ,
Մնաց իրենց կոկորդներում
Խեղդոտած...

Բոլո՛ր նրանք,
Ովքեր հարուած առ հարուած,

Եւ քար ի քար՝
Տէ՛ր արի՛ւն իրենց՝ ծեփ,
Եւ կերտեցին, կերտեցին —
Ա.Շ Խ Ա.Ր Հ Ը պերճ,

Սակայն իրենք,
Տարամե՛ր՝
Անօթևան՝
Տառապեցին բանդերում...

Եւ թշնամին
Ահաբեկ,—
Որ չլսի սրտի զարկերը նրանց,
Զարկե՛ր՝
Որոնք,
Դո՛ղ են տալիս իր սրտին՝...
Որ խորտակի նրանց հոգին
Աշտարակ,
Որ ջնջի բո՛ցն աչքերից՝
Նրանց հանեց կառափնա՛տ...

Բոլո՛ր նրանք,
Որ աճեցին հողերի մէջ երկաթախառ,
Դարձան կաղնի երկաթէ,
Եւ արմատները նրանց,
Հանքահորից հանքահոր՝
Հասան երկրի լաւային...

Ովքեր
Երկաթ կոփեցին՝
Երկաթացան և իրե՛նք,
Եւ փչելով հնոցին,
Շունչը նրանց
Դարձաւ մրրիկ անդսպելի,
Շունչը՝ որոտ.
Եւ մի ՕՐ,
Բորբոքելիս բոցերն իրենց հնոցի —
Ա՛յդ բոցերում,
Տեսան՝ պոռթկաց
Ա.Ր Շ Ա.Լ Ո՜Ց Ս,
Եւ ծարաւից հրավառ,
Դէպի Արև՜ նետեցին
Իրենց հոգին
Սաւառնակ...

Եւ Գ Ա՛Ն,
Թող Գ Ա՜Ն

Հեղեղների յորձանքով,

Բոլո՛ր նրանք —
Աշխատանքի, քրտինքի
Գորշ որդիներն անիծւած,
Սեղմոտելով կռուփն իրենց կռանոտ,
Ահեղաբիբ՝

ԳԱ՛Ն,
Թող ԳԱ՞Ն...

Կրա՛կ,
Կրա՛կ,
ԿՐԱ՛Կ...

Այրվի՞ թող
Հորիզոնից հորիզոն
Հսկա խարույկ ռազմանիշ —
Եւ ես առած
Երկիրն ափիս մէջ հսկա,
Կը շոշափեմ, կը շրջեմ
Միջօրէից միջօրէ՝
Կը համբուրեմ սրտիս
Կարմիր համբոյրով
Ամեն հովիտ, աւազան,
Եւ ծովախորշ, և ցամաք,
Եւ Երկիրը հրագունդ՝
Կը գլորեմ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ բոցերի մէջ...

Եւ դու գոռա՛
Հրետանի,

Շռինդիդ մէջ, թող լսեմ
Շղթաների կոտորումներ բիւրաւոր...

Գոռա՛,

Եթէ բերդից, աշտարակից
Թշնամու՝
Գէթ մի աղիւս,
Մնա առկախ տակաւին։

ԳՈՌԱ՛,
ԳՈՌԱ՛...

Մինչև
Շապիկս կարմիր,
Արնաթաթախ՝
Կը հանեն
Արշալոյսի ցոլքերով.
Ծէ՞ն ծէն՝
Կը զարդարեն, կը կախեն
Մի բարձունքից ի բարձունք,
Ծխնելոյզից ծխնելոյզ,
Եւ կայմից կայմ և կատարից ի կատար,
Ռա՛դիոներից,
Տորմիզներից լեռնակոյտ,
Եւ հանքից հանք,
Աշտարակից աշտարակ,

Փողոցներում,
Եւ տներից ջահակալ,

Եւ ամե՜ն տեղ,
Ամեն տեղ —

Ուր վառե՛լ են մի ՔՈՒՐԱ,
Ուր կենսառատ համբոյրի տակ կռանի,
Սալը զնգա՛
Եւ բաբախի սրտի պէս...

Այն ժամանակ,
Հրեատանի՛, —

Թող կոթողեմ
Իբրև կոթո՛ղ՝ Քեզ, պայծառ,
Դարերի մէջ...

Եւ դո՛ւ եղար
Այն Բանալին աներկրորդ,
Որով բացի, հարթեցի
Ես ճանապարհ՝
Դէպի դարե՛ր լուսաբուղխ,

Մտա կօսմօս՝
Որ դարբնեմ արեգակնե՛ր մեծափառ.
Որ կարկառեմ գիւտից՝ գիւտ,
Ձեռքս՝ լծա՛կ...
Եւ թողնեմ,
Որ Հանճարիս խմորից
Բղխեն լոյսե՛ր՝ շատրւան...

Մտա կօսմօս՝
Ուր կաշխատի
Տիեզերքի Դինա՛մօն։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄԻԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան
Պետական Գրադարան

ԳՐԱՇԱՐԵՑ
ՀԵՂԻՆԱԿԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ «ՄՈՒՐՃԵԻ ՄԱՆԳԱՂ»

ԼՈՑՍ ԵՆ ՏԿՍԵԼ

1. [redacted] . . . . . Титан (распрод.)
2. ՈՒՐՕՏ ՈՑՏՄԼԷՆ . . . . Բանաստեղծութ. (սպառ.)
3. Գ. [redacted] . . . Գիշերային թիթեռնիկ (սպառ.)
4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂ. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ (սպառ.)
5. [redacted] . . . . . Բանաստեղծութ. (սպառ.)
6. Ն. ՏԷՐ- ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ . . . . Քաղցի օրերին
7. Վ. ՎԱՆԴԼԿ . . . . . Մի գրական գոնար
8. Մ. ԳՕՐԿԻ . . . . . Մայրը
9. Գ. ՊԼԵԽԱՆՈՎ . . Գեղարուեստը եւ հասար. կեանքը
10. «ՔՈՒՐԱ» № 1 . . . . . (սպառ.)
11. Գ. ՇԱՄՈՒՆՑ . . . . . Ճամփին
12. ՋԷԿ ԼՕՆԴՕՆ . . Երկաթէ կրունկը (պատկերազարդ)
13. ԲԱՑԻԿՆԵՐ — Շահուվեան, Պլեխանով, եւ ուրիշներ.
14. ՎԻԿՏՕՐ ՀՒԳՕ . . . . . 93 Թիվը
15. [redacted] . . . . Երկրի հիւթերը (պատկ.)
16. ՈՒ. ՍԻՆԿԼԷՐ . . . . . Ջունգլի (պատկ.)
17. Գ. ՈՒԷԼՍ . . . . . Կոյսերի երկիրը
18. Ա. ԲՕԳԴԱՆՈՎ . . . . . Ինժէներ Մէննի
19. «ՔՈՒՐԱ» № 2
20. ԱՄԵՌ . . . . . Հրետանի
21. ԷՄԻԼ ԶՕԼԱ . . . . . Ածխահատներ (պատկ.)

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆ

22. Մ. ՄԱԶՄԱՆԵԱՆ . . . . . Ժորժ Դրոտ
23 ԱՐՈՒՍԻ . . . . . Յակոբ Յակոբեան
24. [redacted] . . . . Վուլկանները ժայթքում են

Դիմել.—Москва, Мясницкая, Армянский 2.
Арм. издательство „СЕРП и МОЛОТ“

Типография „СЕРП и МОЛОТ“
Армянский пер., д. 2. Телефон 2-78-28
Москва, 1924 год.

Главлит № 15573 Тираж 500 экземп.

«Ազգային գրադարան»
NL0322686

19.085